ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության կարիքների համար գրենական պիտույքների և գրասենյակային նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԲՏԱՆ-ԷԱՃԱՊՁԲ-2022/03» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «29» նոյեմբերի 2021թ.
Ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝

Լիլիթ Մանուկյան՝ ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության գործերի կազմակերպման վարչության պետ

հանձնաժողովի անդամներ՝

Հրաչ Բաբախանյան՝ ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության գործերի կազմակերպման վարչության ավագ մասնագետ

Վերգինե Բաղդասարյան՝ ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության գործերի կազմակերպման վարչության գլխավոր մասնագետ

հանձնաժողովի քարտուղար՝

Գոռ Եսայան՝ Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության գնումների բաժնի գլխավոր մասնագետ

Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

1. Հաստատել ԲՏԱՆ-ԷԱՃԱՊՁԲ-2022/03 ծածկագրով հրավերի 13, 14, 15, 16, 17, 18, 19, 20, 21, 22, 23, 24 չափաբաժինների մասով ընթացակարգը չկայացած հայտարարելու վերաբերյալ:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 3, դեմ՝ 0:

1. Ընթացակարգը չկայացած հայտարարելու վերաբերյալ

Հաշվի առնելով, որ 23.11.2021 թվականին ժամը 12.00-ից 12.41-ը էլեկտրոնային աճուրդների համակարգը խափանվել է, ինչի արդյունքում խոչընդոտվել է 13, 14, 15, 16, 17, 18, 19, 20, 21, 22, 23, 24 չափաբաժինների մասով ժամը 12:00-ից մինչև 13:00 անցկացվելիք հակադարձ աճուրդը, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ կառավարության 02/05/2019թ. N 516-Ն որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետը՝ էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով կազմակերպված գնման ընթացակարգը (տվյալ չափաբաժինը) «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիման վրա հայտարարվում է չկայացած, եթե տվյալ ընթացակարգի շրջանակում սահմանված հայտերը ներկայացնելու վերջանաժամկետը լրանալու պահի դրությամբ համակարգը խափանված է, ուստի հանձնաժողովը որոշեց վերոնշյալ չափաբաժինների մասով ընթացակարգը հայտարարել չկայացած:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի՝

Նախագահ՝ _____ Լիլիթ Մանուկյան

Անդամներ՝ _____ Հրաչ Բաբախանյան

_____ Վերգինե Բաղդասարյան

Քարտուղար՝ _____ Գոռ Եսայան